ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 10, 1956 Биол. и сельхоз. науки

ԱԿԴՐԱՏԵԼԻԿՈՒ.

Ա. Կ. ԹՈՌՉՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը աշխատանք է ձեռնարկել՝ Արարատյան հարթավայրի պայմաններում եգիպտացորենի մշակության հետ կապված հարցերը պարզելու ուղղությամբ։ Սրանց թվին են պատկանում՝ բույսերի խտությունը մեկ հեկտարի վրա, նրանց տեղադրման ձևը, բանջարանոցային կուլտուրաների ու ցորենի բերքահավաքից հետո ամառային ցանքի մշակությունը, եգիպտացորենի տարբեր սորտերի արժեքը այս պայմաններում և այլն։

Փորձնական ցանքը կատարվել է Շահումյանի շրջանի Շենգավիթ գյուղի կոլտնտեսության դաշտում։ Այդ նպատակով երկու հեկտար հողամաս 1954 թվականին ենթարկվել է ցրտահերկի, իսկ 1955 թվականին կրկնավար է արվել և փոցխվել։ Ցանքը կատարվել է մայիսի 5-ին։ Ցանվել է եգիպտացորենի Կրասնոդար 1/49 սորտը, 70 սմ միջշարքային և 30 սմ միջբույսային տարածությամբ։ Յուրաքանչյուր բնում ցանվել է 3—4 հատիկ։ Առաջին ջուրը տրվել է ցանքի հաջորդ օրը՝ ակոսային եղանակով։

Կատարվել է բույսերի նոսրացում 2 անգամ՝ հունիսի 5-ին և 11-ին։ Մեկ հեկտար տարածության վրա թողնվել է յուրաքանչյուր բնում երկու բույս, իսկ մյուս հեկտարի վրա՝ մեկական բույս։

Տրակտորային կուլտիվատորով երեք անգամ միջշարքային մշակություն է կատարվել և ամեն անգամ, մշակությունից անմիջապես հետո, միջբույսային տարածությունները ձեռքի հողուրագներով փխրեցվել են։ Ցանքը ջրվել է վեց անգամ։ Հունիսի 15-ին տրվել է անուցում՝ ամոնիակային սելիտրայով՝ 1 գ/հ.

Բերքահավաքը կատարվել է կաթնամոմային հասունության շրջանում՝ օգոստոսի 8—10-ը։ Կողերի բերքը հաշվի է առնվել փաթեթների հետ միասին։

Ստացված բերքին վերաբերող տվյալները բերված են աղյուսակ 1-ում։

Բերված տվյալները ցույց են տալիս, որ բնում երկու բույս թողնված հեկտարից ստացված կանաչ մասսայի բերքը 67 ցենտներով ավել է բնում մեկ բույս ունեցող հեկտարից, իսկ բներում մեկական բույս թողնված հեկտարի կողերի բերքը 13,5 ցենտներով ավելի է երկուական բույսերի կողերի բերքից։

Տվյալներից պարզվում է, որ կանաչ մասսայի շատ բերք ստանալու համար հարմար է 70×30×2 խտության ցանքը, իսկ կողերի բարձր բերքի համար՝ բույսերի 70×30×1 խտությունը։

Աղյուսակ 1

Գարնանը ցանված եգիպտացորենի բերքատվությունը Շենգավիթի կոլտնտեսությունում 1953 թ.

Բնում թողնված բույսերի թիվը	Բույսերի բարձրությունը (մետր)	Ընդհանուր բերքը ց/հ	Կողրերի բերքը ց/հ
2	1,82	381	131,0
1	2,10	314	144,5

Պետք է նշել, որ ցանքի 70×30×1 սխեմայի դեպքում կողրերի կազմակերպումն ու հասունացումն ավելի արագ են կատարվում, քան ցանքի 70×30×2 սխեմայի դեպքում։ Դրա հետ միասին, 70×30×1 սխեմայի դեպքում կողրերն ավելի խոշոր են, և թույլ զարգացած կողրերի թիվն ավելի պակաս, քան երկրորդի դեպքում։ Այդ իսկ պատճառով բներում մեկական բույս ունեցող ցանքի կողրերի կշիռը բարձր լինելով հանդերձ, բարձր է նաև հատիկային արժեքը։

Որոշ փորձեր են կատարվել նաև եգիպտացորենի ամառային ցանքի գծով։ Ցանքը կատարվել է բանջարանոցային կուլտուրաներից ազատված հողամասում և աշնանացան ցորենից հետո։

Շենգավիթի կոլտնտեսության բրիգադիր Կ. Պողոսյանի ղեկավարած բրիգադայում բանջարանոցային կուլտուրաներից (վաղահաս կաղամբ, ոլոռ, գազար, զանազան կանաչեղեններ և այլն) ազատված մեկ հեկտար հողամասը 25 տոննա գոմաղբով պարարտացնելուց և վարելուց հետո, օգտագործվել է եգիպտացորեն ցանելու համար։ Ցանքը կատարվել է հունիսի 17-ին, ցանվել է եգիպտացորենի Կրասնոդար 1/49 սորտը։ Միջշարքային տարածությունը վերցվել է 70 սմ, իսկ միջբնայինը՝ 30 սմ։ Ցանքը կատարվել է ձեռքով։ Նոսրացումից հետո բնում թողնվել է մեկ բույս։ Երկու անգամ մշակվել է տրակտորային կուլտիվատորով և մեկ անգամ՝ ձեռքի հողուրագներով։ Ցանքը ջրվել է հինգ անգամ։ Բերքահավաքը կատարվել է հատիկների լրիվ հասունացման շրջանում՝ սեպտեմբերի 28—30-ը ժամանակամիջոցում։ Մեկ հեկտարից ստացվել է 120 ցենտներ հասունացած կողրերի և 340 ցենտներ ցողունի բերք։ Ցողունները և տերևները հյութալի լինելու շնորհիվ ամբողջությամբ օգտագործվել են սիլոսի համար։

Հացահատիկային կուլտուրաներից հետո խոզանացան ցանք կատարելու համար հատկացրած հողերն ազատվել են հուլիսի սկզբներին։ Ցանքը կատարվել է հուլիսի 22-ին։ Միջշարքային տարածությունն ընդունվել է 70 և միջբնայինը՝ 30 սմ։

Չնայած ցանքի ուշացմանը և նոսրացման ու մշակման անբավարար աշխատանքներին, հոկտեմբերի 15-ին բույսերի միջին բարձրությունը հասավ 1,2 մետրի։ Կշռումները ցույց տվին, որ այդ ցանքի հեկտարի բերքը կազմում է 172 ցենտներ կանաչ մասսա և 33,8 ցենտներ կաթնային և կաթնամոմային հասունության կողրեր։

Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ Արարատյան հարթավայրի պայմաններում վաղահաս բանջարանոցային կուլտուրաների և աշնանացան ցորենի բերքահավաքից հետո, առանց ուշացնելու եգիպտա-

ցորենի ցանք կատարելու և մշակումը կազմակերպելու դեպքում հնարավոր է ստանալ ինչպես կաթնամոմային և լրիվ հասունացած կողրերի, այնպես էլ կանաչ մասսայի բարձր բերք։

Եգիպտացորենի միջշարքային և միջբույսային տարբեր հեռավորությունների հարցը գարնանային ու ամառային ցանքի դեպքում ուսումնասիրելու համար մեր կողմից փորձ է դրվել Զարրախի կոլտնտեսությունում։ Ցանվել է եգիպտացորենի սպիտակ շաքարային տեսակը, որը տեղում մշակվում է բանջարանոցային կուլտուրաներից հետո, կուլիսային կամ կիսակուլիսային, կիսախառն ցանքի ձևով։ Տվյալները բերվում են աղյուսակ 2-ում։

Աղյուսակ 2

Ն. Զարրախի կոլտնտեսությունում եգիպտացորենի գարնանային և ամառային ցանքի բերքատվությունը բույսերի տարբեր խտության դեպքում

Ցանքի ժամանակը և նախորդը	Ցանքատարածությունը հեկտարներով	Սնման մակերեսը սմ.	Բնում թողնված բույսերի թիվը	Բերքը ց/հ	
				Կաթնամոմային հասունության կողրեր	Կանաչ մասսա
27/IV, ցրտահերկի վրա	0,5	70×30	1	24,1	144,1
	0,5		2	17,3	277,3
	0,3	50×30	1	11,2	191,1
	0,3		2	6,2	76,2
	0,5		1	3,2	188,2
	0,5		2	1,8	193,8
20/VII, խոզանի վրա	0,5	70×30	3	0,7	176,7

Բերքահավաքը բոլոր դեպքերում կատարվել է կաթնամոմային հասունության շրջանում։ Բերքատվությունն ընդհանուր առմամբ բարձր չէ։ Դրա հիմնական պատճառը տեղական եգիպտացորենի ուժեղ ճյուղավորվելն է, որի հետևանքով նրա հասունացումը ձգձգվում է։ Բույսերի ճյուղավորվելու հատկությունը հատկապես խիստ է արտահայտվում ամառային ցանքերում։

Տվյալներից երևում է, որ անկախ ցանքի ժամկետից, ցանքի 70×30×1 սխեմայի դեպքում հատիկների բերքն ավելանում է, 70×30×2-ի դեպքում գերազանցում է կանաչ մասսայի կշիռը, իսկ 70×30×3 սխեմայի դեպքում նկատվում է բերքի անկում։

Կարևոր է նաև Արարատյան հարթավայրի համար ներդրվող սորտի հարցը։ Զարրախի կոլտնտեսությունում 1955 թվականին ցանվեց ոչ թե շրջանի համար առաջարկված Կրասնոդար 1/49 սորտը, այլ իրենց տեղական եգիպտացորենի սերմացուն։ Այս ուղղությամբ նախնական տվյալներ ունենալու համար տեղում կազմակերպվեց եգիպտացորենի՝ Գրուշևսկայա, տեղական սպիտակ կրեմնիստայա (Հյուսիսային Կովկաս,) Կրասնոդարի 1/49, հիբրիդ «Ուսպեխ» և տեղական շաքարային տեսակի փորձարկում։ Փորձը դրվեց չորս կրկնողությամբ, յուրաքանչյուր փորձամարգը 60 մ², ցանքի 70×30×1 սխեմայով։ Ցանքը կատարվել է մայիսի 15-ին։

Բերքահավաքը, որի տվյալները բերվում են աղյուսակ 3-ում, կատարվել է լրիվ հասունացումից հետո։

Աղյուսակ 3

Եգիպտացորենի մի քանի սորտերի բերքատվությունը կողբերով Շահումյանի շրջանի Զարբախ գյուղի կոլտնտեսությունում

Սորտի անունը	Լրիվ հասունացման ժամանակը	Բույսերի բարձրությունը մետրերով	Բերքը կողբերով ց/հ
1. Գրուշևսկայա	20/VIII	1,81	38,1
2. Տեղական սպիտակ կրեմնիստայա (Հյուսիսային Կովկասի)	18/VIII	1,92	33,7
3. Կրասնոդարի 1/49	28/VIII	2,25	35,0
4. Հիբրիդ «Ռուսպեխ»	28/VIII	2,32	34,3
5. Տեղական շաքարային	30/VIII	1,79	22,9

Սորտափորձարկման առաջին տարվա տվյալները որոշակի կերպով ցույց տվին, որ տեղական եգիպտացորենը բերքատվությամբ խիստ ետ է մնում փորձարկվող բոլոր սորտերից, որը կոլտնտեսության և մեր փորձերի ցածր բերքի հիմնական պատճառն է։ Տեղական եգիպտացորենի բացասական հատկանիշներից մեկը նրա ճյուղավորումն է, որի հեռացման դեպքում նոր ճյուղեր են առաջանում։ Փորձարկվող սորտերից ամենից լավ տվյալներ ունեն Գրուշևսկայա և ապա Կրասնոդարի 1/49 սորտերը, որոնք հետագայում, այլ սորտերի հետ միասին, դարձյալ պետք է փորձարկվեն վերջնական գնահատական ստանալու համար։

Ամփոփելով եգիպտացորենի մշակման հետ կապված մեկ տարվա տվյալները, կարելի է ասել հետևյալը։

1. Արարատյան հարթավայրի պայմաններում եգիպտացորենը հնարավոր է մշակել ինչպես վաղահաս բանջարանոցային կուլտուրաներից, այնպես էլ աշնանացան ցորենից հետո։ Դրա շնորհիվ նրա ընդարձակումը հնարավոր է առանց մյուս կուլտուրաների տարածությունը կրճատելու։

2. Ինչպես գարնանային, այնպես էլ ամառային ցանքերից կախնամոմային հասունության կողբերի և կանաչ մասսայի բարձր բերք ստանալու համար ցանքը պետք է կատարվի 7×30×2 սխեմայով, իսկ լրիվ հասունացած հատիկների համար՝ 70×30×1 սխեմայով։

3. Փորձարկված սորտերից ամենից հաջող արդյունքներ ստացվել են Գրուշևսկայա, իսկ նրանից հետո Կրասնոդարի 1/49 սորտերից, որոնք պետք է ավելի լայն տեղ գրավեն։

4. Սորտափորձարկման աշխատանքները Արարատյան հարթավայրում պետք է շարունակել, ավելի շատ սորտերի նկատմամբ և երևան բերել նրանցից առավել բարձր բերքատուները։

Հայկական ՍՍՌ ԳԱ Բույսերի գենետիկայի
և սելեկցիայի ինստիտուտ

Ստացվել է 12. III 1956 թ.

А. К. ТОРЧЯН

ДАННЫЕ ПО ОБРАБОТКЕ КУКУРУЗЫ В УСЛОВИЯХ АРАРАТСКОЙ РАВНИНЫ

Резюме

Целью настоящей работы является выяснение вопросов, связанных с обработкой и внедрением кукурузы в условиях Араратской равнины в качестве пожнивной культуры после скороспелых овощных культур и озимой пшеницы. Исследования проведены в колхозах сел. Шенгавит и Чарбах Шаумянского района. На основании проведенной работы можно заключить следующее.

1. В Араратской равнине кукуруза, как пожнивная культура, дает относительно высокий урожай как после скороспелых овощных культур, так и после озимых пшениц. Поэтому расширение посевов кукурузы возможно без сокращения площадей, занимаемых другими культурами.

2. Для получения высокого урожая початков кукурузы молочно-восковой спелости и зеленой массы от весенних и летних посевов наиболее эффективен посев по схеме 70×30×2, а для полного созревания урожая—70×30×1.

3. Из испытанных сортов наиболее урожайными оказались Грушевская, а также Краснодарская 1/49. Работа в направлении по выявлению еще более урожайных сортов должна быть продолжена.